

են նշանակուի և գերմանական դեսպան կոմս շաքիլիզին, որ արդէն ճանապարհ է ըն- լին փետրվարի 1-ին անգլիական դեսպանի կ. Պոլիս հասնելուց 2 ժամ յետոյ սուլ- տանի գեներալ-ադիւտանտը գնաց նրան ող- ջունելու իր տիրոջ կողմից: Երէկ Գոշնի Բ. Կրան մէջ էր, որտեղ նա երկար ժամանակ խօսում էր մեծ վիզեր Սահլ-փաշայի և արտաքին գործերի մինիստր Ասիմփաշայի հետ: Թիւրքաց կառավարութիւնը չա- փազանց վախճնում է Բոլնաստանի զինաւոր- վելուց, ի նկատի ունենալով իր կատարեալ անախտութիւնը: Եկամտանքի աղբիւրները մինչ այն աստիճան սպաւելն են, որ կառա- վարութիւնը անկարող է ուժիններ վճարել կայսերական լիցէյի պրոֆէսորներին, որոն- ցից մէկը հրաժարվեցաւ դասախօսութիւն- ներ կարգաւորուց, որովհետեւ վեց ամիս շա- րունակ իր ուժնից ոչ մի կոպէկ չէր ստա- ցել: Բացի այդ լրագրիւնները հրատարակեցին այդ անցքը և գրանով կտրվեցաւ հաւա- տարմութիւնը դէպի կառավարութիւնը, որ երբեմն այս և երբեմն այն բանկիրից կրէ- զիտ է խնդրում: Թիւրքիսն, ինչ որ կա- լողացաւ, գրաւ դրեց, մինչև անգամ Կ. Պոլսը Գալատայի հետ միացնող կամուրջի եկամուտը: Նա պարտական է Անգլիային, Ռուսաստանին, Ֆրանսիական և Թիւրք բանկիրներին: Ամենքը գլուխը կորցրել են, իսկ սուլթանը անձնականապէս կառավա- րելով արտաքին քաղաքականութիւնը, աւե- լի էլ խախտում է Թիւրքիայի դրութիւնը: Եւրոպայի և Ասիայի մէջ: Նորերում լուր տարածվեցաւ, որ Թիւրքիան իր երեք մի- լիոն պարտքի փոխարէն մտադիր է զիջա- նել Ռուսաստանին Հայաստանի մի մասը՝ Վան, Մուշ, Էրզրումի հետ միասին: Կրժ- ուար է գտնել, թէ որքան ձիւշտ է այս լուրը, յայտնի է միայն, որ երեք տարվայ հարկերը փոքր-Ասիայի մէջ առաջուց առ- նելով, Թիւրքիան զգում է իր գործի վախ- ճանը: Կորցնելով իրանց ընդունակութիւնը ապագան նախատեսելու մասին, Թիւրքերը անկադար կրկնում են՝ տեւսնելու, Աստ- ուած ոչ գործած է:

Բոլնական տարրի աջողութիւնը Արև- ելքի մէջ, որանց նա ձգտում է կլանել միացած բոլոր տարրերը, չափազանց նկա- տելի է. սխտեմատիկաբար իրանց նպա- տակին ձգտելով և տարածելով յունա-

կան նոր լեզուն, հելլենները ամենակարճ ժամանակամիջոցի մէջ այն հետեւանք- ների հասան, որ նրանց լեզուն այժմ մըր- ցում է Թիւրքաց լեզուի հետ կայսերու- թեան նոյն իսկ մայրաքաղաքի մէջ: Ոչ մի յոյն ձեր հարցին ուրիշ լեզուով, բացի յունարէնից, չի պատասխանի, եթէ նա մինչև անգամ իմանայ Թիւրքաց և հայոց լեզուները: Այդ գաղափարը մինչ այն աս- տիճան սովորական է դարձել յոյների հա- մար, որ մինչև անգամ յոյն ծառաները ստի- պում են մեծերին և փոքրերին յունարէն խօսել: Ես առիթ ունեցայ փողոցի մէջ խօ- սել մի փոքրիկ յոյն աղջկայ հետ, որ վե- րագառնում էր հայ-կաթիլների ուսումը: Նարանից, և նա իմ բոլոր հարցերին Թիւր- քաց լեզուով մի գարմանայի յամառու- թեամբ պատասխանում էր յունարէն լեզուով: Իսկ ինձ յայտնի է, որ հայ-կաթիլների ուսումնարանի մէջ ամենքի համար պար- տաւորեցուցիչ է իմանալ Թիւրքաց լեզուն:

Կ. Պոլսի հայերը յոյների կատարեալ հակապատկեր են կազմում թէ տոկոսնու- թեան պակասութեամբ և թէ քաղաքական համերաշխութեամբ: Կ. Պոլսի հայը բա- ւական օտարտուր քաղաքութիւն է կազ- մում հայաստանցի և ուսմանքնակ իր ցե- ղակցներից: Նա թիւթե է, զվայտն է, դիւրմբունդ և շուտով մոռացող: Նրան պակաս են մտածված գործողութիւնները և կամքի ոյժը: Արտաքուստ նա ֆրանսիա- ցի է, բովանդակութեամբ և հասկացողու- թեամբ վրացի: Եթէ այստեղ պատահում է հայկական իսկական տիպ, աչքի ընկնող ըն- դունակութիւններով, եռանդով և հաստատ բնաւորութեամբ, այդպիսի անձնաւորու- թիւնները գաւառացիներ են Հայաստանից Կ. Պոլսի եկած և ոչ թէ մայրաքաղա- քի մէջ ծնվածներ: Այստեղ շատ կան այդ- պիսի գաւառացիներ, որոնք գերազանցում են մասնաւոր և պետական գործունեու- թեան մէջ: Կրանց թւիցն է և սահմանա- գրութեան այն հեղինակը, որի հետ երեք տարի առաջ կապված էր Միտհաթփա- շայի անունը: Կա Գրիգոր Էֆենդի Սեփանն է, թէ Միտհաթի և թէ Արդու-Աղբիլի ու Մուրադ Մ ժամանակակից գործիչների մե- Ֆիւստօֆէլը:

Համեմատելով Կ. Պոլսի հայերի և յոյնե- լի բնաւորութիւնները, ես կամենում էի ակն-

երե ցոյց տալ Կ. Պոլսը կու տուող հել- լենականութեան առաւելութիւնը, որի հետ մինչև անգամ հայերը անկարող են գրականապէս մրցել: Կրանով կարող էք դա- տել, թէ ինչ հետեւանքներ կունենայ յոյ- ների մօտենալը Մակեդոնիային և Բուլե- լիային, երբ Բոլնաստանի հետ կը միանայ: Կարծես և Թէսալիա: Հաւատացէք, որ յոյնե- լի արմատացած աղգային ֆանատիկոսու- թեանը և յամառութեանը դժուար թէ դի- մանայ նոյն իսկ բողաբական և սերբական դաշնակցութիւնը: Բոյները սլավոններին մի սպունդ կը դարձնեն, որ հեշտութեամբ կը ծըծէ հելլենական լեզուն և սովորու- թիւնները: Ինչ և իցէ պատմութեանը և անցքերի ոյժին կարելի է ընդդիմադրել, բայց անկարելի է նրանց յաղթել: Եթէ վերջին խօսքը միշտ կուլտուրային է պատ- կանում, ուրեմն անվիճելի է, որ յունական կուլտուրան միշտ եղել է և կը լինի սլա- վոնների և հայերի կուլտուրայից աւելի բարձր:

Ահա Թիւրքաց կառավարութեան մի քա- նի նոր կարգադրութիւնները: Ներքին գոր- ծերի միմիկտութիւնը կարգադրել է ժո- ղովորագրութիւն անել Կ. Պոլսի մէջ մի նորութեամբ, որ երեք չէ պատահել Թիւր- քաց տիրապետութեան պատմութեան մէջ. հրամայված է քաղաքի բնակիչ տղամարդ- կերանց հետ հաշուել և կանանց, որոնց մինչև այժմ Թիւրքերը անհատ մարդիկ չէին համարում: Ինչպէս տեսնում էք թիւր- քերի մէջ էլ մտնում է առաջագիմութեան ոգին, իսկ նրանց բամբասում էին յոյները, հայերը և սլավոնները, Թիւրքերի—կուլ- տուրական այդ թշնամիները: Բայց բանը նրանումն է, որ վերջիշեալ քայլը արված է ոչ թէ մարդասէր նպատակներով, այլ զե- ղեցիկ սեռի վրա էլ հարկ դնելու համար:

Այսօր և երէկ ուղարկվեցան Վոյս և Եպիփոս բաւական շատ պատերազմական պաշարներ և զինուորներ գլխաւորապէս զվարդիական արտիլերիայից: Թիւրքիայի ծառայի դերը այժմ վիճակվել է աւստրիա- կան շոգնաւանների ընկերութեանը, որ քսան անգամից աւելի այցելել է յունական ջրե- լը և որ յոյս ունի վարձատրութիւն ստա- նալ Թիւրքիայի յաղթութենից յետոյ, երբ Բոլնաստանը նրան մի քանի միլիոն պատե- րազմական ծախսեր կը տայ:

«Վակիթ» լրագրի այսօրվայ լուրերի հա- մեմատ Մակեդոնիայից Կ. Պոլսի են բերված 13 բողաբացիներ, որոնք մեղադրվում են պետական դաւաճանութեան մէջ, այ- սինքն ապստամբութիւն պատրաստելու մէջ: Թիւրքաց մեղադրանքների բնաւորու- թիւնը հասկանալու համար պէտք է այցի- լիլ Թիւրքաց դատարանը Թիւրքերի և քրիս- տոնականների վէճերը քննելու ժամանակ, երբ քրիստոնեաները մեղաւոր են հանդի- սանում վաներ և իրաւաբանական իրա-ւունքներ չունենալու պատճառով: Իսկ Կի- արբէքիլի վիլայեթի մէջ կատարված աւա- զակութիւնների 52 քիւրդ առաջնորդները, որոնք բերված էին Կ. Պոլս, վերադարձ- րած են իրանց հայրենիքը մեղադրական ապացոյցների պակասութեան պատճառով:

Գոշնի Կ. Պոլսի գալու օրը մի տեսակ նախագուշակութիւն պատահեց. իտալա- կան դեսպան կոմս Կորտի, Չարագանի պա- լատի մօտ, որտեղ կայանաւորված է սուլ- թան Մուրադ, ձիով զբոսնելու ժամանակ, վայր ընկաւ ձիուց և իր ոտը կոտրեց: Այդ հանգամանքը պալատական աստղաբաշխնե- լին առատ նիւթ տուեց նախագուշակու- թիւնների համար:

Կարձեալ մի ծիծաղելի դէպք: Երկու օր է, որ տեղական մամուլի մէջ յարձակողա- կան յօդուածներ են տպվում Ռուսաստանի քաղաքական և կրօնական անհամբերողու- թեան դէմ: Այդ յօդուածներին տեղիք տուեց կիսապաշտօնական «Մասիս» լրագրի լուրը, իբր թէ Թիւրքիայի զինուորական գիմ- նապիայի և արհեստական դպրոցի վարչու- թիւնները չեն արգելում իրանց ոչ-հայ ուսանողներին գործածել արմեա շկա բա- ու իրանց հայ ընկերներին հայհոյելու ժա- մանակ: Այդ յիմար լուրը, որ այստեղի ամ բողջ մամուլը արատապէս, անբաւականու- թիւն պատճառեց մինչև անգամ ուսա- սէրներին, որոնք Աստուած գիտէ զրանից ինչեր են կորակացնում: Այսպէս են մար- դիկ տրամադրված այստեղ:

ՄԵՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԵՇԱԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 փետրվարի: Պետեր- բուրգի նահանգական ժողովի վերջին նիս- տի ժամանակ ընդունվեցաւ Շակեվիցի կազ- մված վարչական աքսորանքները ոչնչացնե-

մի երեկոյն երգչուհի էլ չէ, մի Պատտի, կամ մինչև անգամ մի Արտօ չէ, այլ մի երգչուհի է, որ ունի մի թէն զօրեղ, բայց արդէն կոտրած ձայն, մի երգչուհի որ իր կեանքի մէջ բացի խորհովի և կիկի թատրոններից, ուրիշ ոչ մի տեղ չէ եղել և երբ երբ չի էլ յանդգնի Մօսկ- վայում կամ Ս. Պետերբուրգում երգելու:

Թող ընթերցողը ինքն դատէ... Տաւ հա- զար բոլոր ամբողջ Թիւրքաց Հայաստանի սո- վայներին համար և տաւ հազար բոլոր մի Պալլադիկոն համար...:

Ո՛վ է ասում թէ Թիւրքիսեցի հայը ժլատ է, ոչ, նա ժլատ չէ, նա առատաձեռն է, նա ժլատ է միայն իր աղգային գործերի վերաբերու- թեամբ:

Որովհետեւ ես ոչ մի ֆելիտոն չեմ կարող գրել, առանց իմ գրուածքի մէջ Էրիցովին յիշե- լու, կը վերջացնեմ այդ ֆելիտոնն էլ մեր ե- լեկի հազգէտի մասին մի քանի խօսք ասելով:

Թիւրքիսը այս քաղեկա պատրաստվում է այս տարվայ աշնանը լինելու հնազանդական ժողով- վին: Թիւրքիսի հրապարակական գրադարանի զանգում անդադար լինում են հնազանդական ժողովի համար պատրաստական ժողովներ:

Այդ տեսակ մի ժողով եղել է այս օրերս էլ: Էրիցով բաւական հետաքրքիր զեկուցում ա- բաւ հայերի մէջ թաղման սովորութիւնների և ձեւերի մասին, թէ հեթանոսութեան և թէ քրիստոնէութեան ժամանակ:

Իր զեկուցման վերջը մեր հնազգէտը հարկաւոր համարեց պատմել մի հայոց ժողովրդական լե- գէնդա:

Երբ Աստուած ստեղծեց աշխարհը, նա որո- չեց որ բոլոր կենդանիները և մարդը պէտք է ապրեն իւրաքանչիւրը 30 տարի: Անցնում է մի երկու տարի, ներկայանում է Աստուծուն էլը և ասում է.

—Տէր, այսպէս ապրել ես չեմ կարող: Մարդը ինձ տանջում է, ինձ աճաղին բռնելով, բեռ- նաւորում է, վատ է կերակրում ինձ, և բացի սրանից իմ ծանր աշխատանքը վարձատրում է անդադար ծեծելով ինձ: Ես 30 տարի այդ տան- ջանքի մէջ ապրել չեմ կարող, աղաչում եմ, քեզ, պակասեցրու ինձ իմ տարիքը:

—Ետ լաւ, ասում է Աստուած, ես քեզանից կը պակասեցնեմ 12 տարի, դու կապրես միայն 18 տարի:

Էլը չնորհակալութիւն է յայտնում և գնում է: Անցնում է մի քանի ժամանակ, գալիս է չուշը:

—Տէր իմ, ասում է չուշը, այդ ինչ կեանք է որ ես եմ քաջում: Դա չան կեանք է, ուրիշ ոչինչ: Այդպէս 30 տարի ապրել ես չեմ կարող: անդադար հաչել, մարդու բնականաբար պահա- պան լինել, տկուր ուկորներ կրծել, և իմ ցոյց տուած անսահման հաւատարմութեան համար դէպի մարդը, նրանից անդադար ծեծ ուսել: Ոչ, այսպէս ապրել ես չեմ կարող, խնդրում եմ

քեզ պակասեցրու ինձ մի քանի տարիներ իմ կեանքից:

—Ետ լաւ, ասում է Արարիչը, ես քեզանից յետ կառնեմ 15 տարի, դու կապրես ուրեմն 15 տարի:

Շուշը չնորհակալութիւն յայտնելով Աստու- ծուն, հեռանում է:

Նրանից յետոյ գալիս է կապիկը:

—Աստուած իմ, ասում է նա, իմ կեանքը անտանելի է. միշտ կապիկութիւն անել, ամեն- քին ծաղրել և ուրիշները համար ծաղրածութեան առարկայ լինել, մարդու ձեռքում խաղալիք լի- նել,— դա ինչ կեանք է: Ինձ համար երեսուն տարի շատ է: Գիծայիր և պակասեցրու կեանքը:

—Ետ լաւ, ես քեզանից յետ եմ առնում ուրեմն միայն 17 տարի:

Կապիկը մեծ չնորհակալութիւն յայտնելով, հեռանում է:

Այդ քաղեկն ներկայանում է Աստուծուն մարդը:

—Ողորմած Աստուած, ասում է մարդը, ինձ համար 30 տարի քիչ է: Մինչև երեսուն տար- վայ հասակս ես հազիւ վերջացնում եմ վայելել երկտասարդական օրերիս ուրախ և անհոգ կեանքը, յետոյ պէտք է սկսեմ հարստութիւն գիլել, յետոյ պակսվում եմ, յետոյ պէտք է զաւակներս դաստիարակեմ,— մի խօսքով 30 տարի ինձ համար քիչ է:

—Ետ լաւ, ասում է Աստուած, դու կունե-

նաս քեզ սկզբից յատկացրած 30 տարին, բացի սորանից ես քե կեանքին աւելացնում եմ 12 տարին որ ես յետ եմ առել էլից, 15 տարին որ հանել եմ չան կեանքից և կապիկի կեանքից հանած 13 տարին, ուրեմն դու կապրես ընդա- մենը 70 տարի:

Երբ Էրիցով վերջացրեց իր այդ աւանդու- թեան պատմութիւնը, ժողովի մէջ տրեց ընդ- հանուր, խորհրդաւոր լուծութիւն: Այդ ժամանակ ժողովին ներկայ գտնված հասակաւոր հանդիսա- կաններից մինը գիմնով իր մի նոյնպէս հասա- կաւոր ծանօթին, բարձր ձայնով հարցրեց նրան:

—Իսկ մենք, բարեկամ, ինչ հասակի մէջն ենք գտնվում այժմ— մարդու, էլի, չան, թէ կա- պիկի հասակի մէջ:

Ընդհանուր ծիծաղ յաջորդեց այդ հարցմուն- քին, բայց հարցին ոչ մի տեղից պատասխան չեղաւ:

Մեր ուսումնական, հնազգէտ զեկուցանողը բազմական կերպով շփոթեց:

Բայց նա էլ չը բաւականացրեց ներկայ գը- տնվածների հետաքրքրութիւնը և չը յայտնեց թէ ինքն ինչ հասակի մէջն է գտնվում:

Ահա այսպէս ենք պատրաստվում մենք այս տարի մեր քաղաքում լինելու հնա գիտական ժողովին:

ԱՍԻԱՅԻ

Ըստ մասին ամենախոնարհ խնդիրքի նախագիծը: Թաղապարսկոյն այդ խնդիրքը ներկայացնելու համար պատգամաւորներ են ընտրուիլ նահանգական առաջնորդ Բորիսովսկի և Շակեկով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 փետրվարի Պետական բանկի 50% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 75 կ., երկրորդ 93 ռ. 25 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 93 ռ. 12 կ., ներքին 50% տոմսակը փոխառութեան տոմսակը արժէ 225 ռ. 25 կ., երկրորդ 222 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ռ. 50 կ., երկրորդ 92 ռ. 50 կ., երրորդ 92 ռ. 50 կ., ոսկի 7 ռ. 81 կ.: Ռուսաց 1 ռ. 1 օնցովի վրա արժէ 25,09 պէս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա 214 մարկ, 62 պֆ., փարիզի վրա 265 ֆրանկ 50 սանտիմ: Բորսայի արամագրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող Գ.Ի.Գ.ՈՐ ԱՐԹՐՈՒՆԻՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ ՄՕՍԿՎԱՅԻՄ Գարու թիւն քահանայ ՊՈՊՈՎԵԱՆՑԻ աշխատասիրութեան «Պատմութիւն Նոր Կտակարանի, հանգրիւմ կարեւոր բացատրութեամբ և Պաշտօնուն աշխարհացոյցով» երկրորդ հատորը: Գինը 60 կոպէկ է: Կրպագատներին զիջումն կը լինի: Կիւմբ. «Въ Москвѣ, домѣ Армянской церкви, священнику Артемію Попову. 1—3 (1)»

Վերականգնեցող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց բնական ԳՈՅՆԸ վերադարձնող: Գինը 2 ռ. շիշը, ՓՈՍՏԱՅՈՎ ուղարկված 2 ռ. 49 կոպէ: ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ:



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԻՒՂ, մազերը ամրացնելու համար, 1 ռ. ամանը փրձին զխալի զէմ, ՏՈՒԱԼԻՏԻ ՍԱՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն: 25—100

ՀԵՄՈՐՐՈՒԿԵԼՆ ԲՈՒՍԵԿԵՆ ՀԵՂԵՆԻԹ փորձված և առաջարկված պրոֆէսոր բժշկի ԿՐԵՏԿՈՎԱՅԻՆ շատ գեղեցիկ միջոց է ՍՏԵՄՈՒՐՈՒՅՆ ԶԵՆԵԶԵՆ ՑԱՒԵՐԻ դէմ, մաքրում է և շատացնում է ԵՐԻՒՆԸ, վերականգնում է ՄԵՐՄՆԻ ընդհանուր հարմօնեան, մանաւանդ՝ առաջարկվում է Հիմնորի և Իպսխոնդրիա ՀԻԼԵՆԻՈՒԹԵԼՆ դէմ: Մի շիշը, գործածելու ԽՐԵՏԵՆԻՈՎ, 1 ռ. 80 կ.: Օտարաքաղաքացիք ուղարկում են ՓՕՍՏԻ ծախար: Ծախվում է Ռուսաստանի ԲՈՒՈՐ ԴԵՂԱՏԵՆՆԵՐԻ մէջ և դեղերի պահեստների մէջ: Պահեստը Մօսկվայում է, Ն. Մատէնէյնի մօտ, Տվերսկայա փողոց: Կիւմբէովի մէջ Կայուշանսկու և Բրայունշտէյնի մօտ: Վարչակայի մէջ Ա. Ֆ. Գալէի մօտ: 18—25 (5)

Միւս և այժմ չեղած ԵԿԵՆՁԻ ԻՒՂ, ԲԺԻՇԿԱՐԻՏԻ, որ կատարելագործված է բժշկի ՄԵՂԱՐԻՎԻ ԴԵՑԶԻՑ: Ընողջացնում է ամեն տեսակ ԽՈՒԹԻՒՆ, եթէ նա ընտանի է: ԵՐԵՒ ԲՈՒՐԼ, ըստանալուց յետոյ ուղարկվում է ՄԻՇՇԱՅԻ ԻՒՂ, մանրամասն ԽՐԵՏԵՆԻՈՎ, գործածութեան մասին: Եւրոպայի կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԴԵՂԱՏՈՒՆՆԵՐԻՑ և Եւրասիայի վԵՆԵՑԵԼԻՑ, Կազանսկայա փողոց № 3: 30—52

ՌՈՒՍՈՒՑ-ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ

Ստացուեցաւ ուղղակի գործարանից Բամսօն Սիմս և Հէմփ, երկաթէ գուլթաններ, երեք անիւնների, ամենագոյնի տեսակից, որոնք արդէն ընդունուած են ամեն տեղ մանաւանդ Եւրեանի նահանգում: Իւրաքանչիւր գուլթանի արժէքն է երեք խոփիւ—85 ռուբլի, իսկ գուլթանով առնողներին զիջումն կը լինի: Նոյնպէս ստացուեցան երկրագործական զանազան մեքենաներ, և մեծ քանակութեամբ Ամերիկայի և Եւրոպայի զանազան տեսակ ապրանքներ: Մագաղիւնում պատուէր կընդունվի ամեն տեսակ մեքենաների և այլ ապրանք թէ Ամերիկայից և թէ Եւրոպայից բերել տալու մասնաւոր աշխատանքով Հասցէն. Դիւրեցօվայա փողոց գալերէյ Արծրունի, Տըփլիս: 6—10

ՎԱՃԱՌՄԱՆ ԳՆԵՐՈՎ ձմեռվայ պայտներ 12 ռ., ֆուսթյաներ 2 ռ. 50 կ., զլխարկներ 1 ռ., մատուցարաններ 5 կոպէկ, ամաններ հատը 12 կ., հնդկական բրնձ 10 կ. ֆունտը: Անգլիական կօնֆէկաներ 40 կ., իսկ թէյ, որի ֆունտը ամեն տեղ 2 ռ. 50 կ. արժէ, 1 ռ. 80 կ. է ծախվում: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ԱՐԹՐՈՒՆԻԹ ԳԱԼԵՐԵՆԻՄ: 6—12

ՀՐԱՏԱՐԱԿԱԹԻՒՆ ԿՈՎԿԱՍ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ Չ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ.

Դուրս եկան մամուլի տակից
1. Գրիգորեանց Չ.—Մարգարեականութեան տարրական դասեր, 18 պատկերներով դպրոցների համար, աշխատ. Չ. Գրիգորեանց, զինն է . . . 50 կ.

2. Ղուկասեանց Հ.—Դասագիրք ընթերցանութեան, զինն է. . . 40 կ.
3. Սիմէօնեանց Ն.—Աշխարհագրութեան ձեւնարկ Չ. Հ. Գ. . . 60 կ.

Մամուլի տակ ընկան՝
1. Ծերենցի—Թէոգորոս Ռշտունի:
2. Գամառ-Քաթիլայի—Մանկական ոտանաւորներ և երգեր:
12—12

Չը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջիկայ գներով կը ծախվին
ԿՈՆԳՈՒԹԻՑ 1 ռ. 5 կ. և 1 ռ. 10 կոպ., շատ լաւ ՄՕՆԵՆԳ 1 ռ. 20 կ. և 1 ռ. 40 կ., հիւսնայի ԿԱՅԱՍՈՒ 1 ռ. 60 կ. և 1 ռ. 80 կ. և ԱՄԵՆԱԼԱԹԻՑ 2 ռ. առանց թղթի: Անգլիական բէյօրիներ 4 ռ.—40 ռ. և հրացաններ 20 ռ.—200 ռ. Անգլիական խանութի մէջ, Գործակալութիւն ԲԱՐՆԱՐԻ ԹԱՐԵՐԸ, ջօնսօնի ԿՈՎՈՒՅՆԵՐԸ, Տուրքիայի ԳՐԻՋՆԵՐԸ և էկստրակտ կակոս, շօփլայի ծախելու համար, որոնք փարիզի հանգիսի ժամանակ ոսկէ մեղալ ստացան: ՀՈՏԱԼԻՏ ԹԵՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՅԱՄԱՆՈՎ 1 ռ. 65 կ. և ամենալաւը 2 ռ. 30 կ.: Վաճառականներին օգտուէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հագուստ 15 ռ., կօնֆէկաներ հագլի դէմ 60 կ. ֆունտը: 28—100

Կենտրոնական գրաքննադատութեամբ ի միջի այլոց փաճառվում են հետեւեալ գրքերը:
1. Առուեստ երկայնակեցութեան, որ է առողջ, երկայն ու երջանիկ ապրելու ուսումը: Շար. բժ. Փոփովիչ, գ. 1—50 կ.
2. Մօրիս կամ աշխատութիւն, ի պէտս նախնական դպրոցաց: Հեղ. տ. Գառս, գ. 1 ա.
3. Հուսակաւոր ոճիւրք: Պրէնիլիէ Մարքիզուհին: Պատկեր. վէպ. Աղ. Դիւմա գ. 1 ա.
4. Գիւսարնի բլուր: Վէպ. Իօսէֆ Սիւ 2 հ. գ. 2 ա.
5. Խորհրդաւոր կղզի: Հեղ. Ժիւլ Վերն 3 հ. բովանդակութեան ա. հ. Օգապար նաւորէկներ. ռ. հ. Բնկեցիկ մարդը. գ. Կղզւոյն Գաղտնիքը գ. 3 ա.
6. Աշխարհի շրջան ու թօսուն օրտան մէջ: Հեղ. Ժիւլ Վերն գ. 1—50 կ.
7. Բարիզի Սմերիկա: Հեղ. Է. Լաբուէ 2 հ. գ. 2 ռ.
8. Պարոյր կամ աւնումն Նիւուէի. գրեաց ծեր. Գ. Պատկանեան գ. 50 կ.
9. Թուղթ Մարկոսի Աղաբէգեան Հայոց Աշխարհի Ազգի և եկեղեցու, աղաքանութեան մասին առ պատուականաց պատուական տէր Ներսէս Պատրիարքն հա. յոց գ. 2 ռ. 25 կ.
10. Հ. Ղ. Աւիշանեան Տեղագիր հայոց Մեծաց գ. 2 ռ. 50 կ.
11. Նուէր Կաղանդի: Պատկերազարդ մանկանց ընթերց. Նշան Պերպերեանի գ. 65 կ.
12. Քնարիկ մանկան. Աղէք. Արարատեանցի գ. 40 կ.
13. Տարիք իմաստասիրութեան, ընդարձակ Հ. Ա. Վ. Գուրգենեան 5 հատոր գ. 3 ռ. 50 կ.
14. Խորհրդական բերդը: Վիպասանութիւն Ծոփէր օր. Գաղիացւոյ գ. 1 ռ.
15. Ընտիր Հայկազունք: Պատկերազարդ կենսագրութիւնը գ. 2 ռ. 75 կ.:
Նոյն տեղը փաճառվում են հայերէն, ռուսերէն և օտար լեզուների դասագրքեր, դասական պիտոյքներ, աշխարհագրական քարտէզներ, նկատողական ուսման համար պատկերներ, վիպասանութիւններ, թատրոնական պիէսներ, ուղեցոյցներ, բառարաններ, տեղեկացոյցներ և այլն:
Օտարաքաղաքացիք իւրեանց պահանջները փողի հետ պիտի ուղարկեն հետեւեալ հասցէիւ. Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. Ճանապ. ծախք պէտք է աւելացնել իւրաքանչիւր ռ. 10 կ.:

ՍԵԼԻՑԵԼԵՆ ԵՏԵՄԻ ԲԺՇԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՏԵՄՆԵՐՈՑԻ ԲԺՇԿԵԼԻ Է. Ի. ԷԼԵԻՆԻ ՀԵՅԻՄԻ Թոյլ են տուած Մօսկվայի ԲԺՇԿԵԼԵՆ ՖԵԿՈՒԼՏԵՏԻՑ: Եւրոպայի միջոցները մեծ ԳՈՐԾԵԻՐՈՒԹԻՒՆ ԵՆ գտել և առաջարկվում են իբրեւ ԵՄԵՆԱԼԵԻ առողջապահական ՄԻՋՈՑՆԵՐ բերանի և առաջների համար: Կարելի է ԵՏԵՄՆԵՐԸ պահպանել ՓՕՇԻՆԵԼՈՒՑ, սառեցնում են ԼՕՐԶՈՒՆԻԻ ԲԵՐԸ և վատ ՀՈՏԻ առաջն են առնում:
Ետամնաբոյժ բժիշկ Ե. Է. Էլէյէյի ԳԻՍԵԼՈՐ ՊԵՆՏԵՐ գտնվում է ՄՕՍԿՎԱՅԻՄ, ԿՈՒՉՆԵՑԿԻ ԿԵՄՈՒՐԸ, ՍՕԿՈԼՈՎԻ տանը:
ԹԻՖԼԻՍԻՄ կարելի է գտնել Ե. Մ. ՑՈՒՐԻՆՈՎԻ ԿՈՎԿԱՍԵՆ և անդրկովկասեան գլխաւոր ՊԵՆՏԵՐՈՒՄ: Ծախողների ՆԵԼՆԵԼՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ: 7—30 (11)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ			
Համեմատեցէք թէյի ֆունտը	1 ռ. 5 կ.	Մօսկվայից բերվող թէյի հետ	Ֆ. 1 ռ. 30 կ.
—	1 ռ. 10 կ.	—	Ֆ. 1 ռ. 40 կ.
—	1 ռ. 20 կ.	—	Ֆ. 1 ռ. 60 կ.
—	1 ռ. 40 կ.	—	Ֆ. 1 ռ. 80 կ.
—	1 ռ. 60 կ.	—	Ֆ. 2 ռ. —
—	1 ռ. 80 կ.	—	Ֆ. 2 ռ. 50 կ.
Ամենալաւը	2 ռ. —	—	Ֆ. 3 ռ. —

49—100